

ՀԱԻՅ ԼՈՒՍ. ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ—ՍՈՑ. ԴԱՍ. ԳԼԽ. ՎԱՐԶ.

Ս.ՇԵՆ. Ս. ԱՍՏԻՃ. ԴՊՐՈՅԻ ԳՐԱԿԱՐԱՆ

ԲՆՈՒԹՅՈՒՆ 1/2 ԱՇԽԱՏԱՆՔ № 3

598.2

Թ-97

ԹՐԻՉՈՒՆՆԵՐԻ ՉՈՒՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹ.

Յ Ե Ի Ե Վ Ա Գ — 1927





Գրատեպլար № 286բ. Կ. 586 Տիրամ 6000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերեվանուս — 889

## ԹՈՂՈՒՆՆԵՐԻ ՉՈՒՆ

Ամեն տարի, հենց վոր աշնան որերը մտանում են, թոշուների մեջ իրարանցում է բնկնում: Հավաքվում են յերամներով և կարծես, աննպատակ դես ու դեն են թափառում: Հանկարծ մարդագետիներում այնպիսի թոշուների յես պատահում, վոր ամենևին նրանց տեղը չէ, կամ տափաստանների թոշուներին անտառումն են տեսնում, անտառի թոշունին՝ դաշտերում, դաշտի թոշունին՝ պարտեզներում, մի խոսքով տիրում է մի ընդհանում խառնաշփոթութուն: Վորսորդների համար բաղդավոր սր է բացվում, ել ինչպիսի թոշուներ ասես, չեն վորսում աշնանը, այնպիսի հազվագյուտ թոշուներ, վոր հազարավոր քիլոմետր գնաս՝ չես ճարի:

Ինչ է պատահել: Ինչո՞ւ ամենքը քոչելու ցավով են բռնվել: Ամեն աշուն մեր աչքի առջև կատարվում է թոշուների համաշխարհային մեծ շարժում: Այս չերևույթը շատ վաղուց է գիտնականների ուշադրութունը գրավել, միայն վերջին



ժամանակներս ե հաջողվել նրա իսկական պատ-  
ճառն իմանալ:

Յես ձեզ այժմ կը պատմեմ, թե առհասարակ  
ինչպես ե կատարվում թուշուհների չուն, ինչո՞ւ  
և դեպի ո՞ւր են նրանք չվում, իսկ դուք աշխա-  
տեցեք դիտել և ուսումնասիրել ձօր բնակավայրի  
չվող թուշուհների կյանքը: Յեթե սիրում եք վոր-  
սորդութուն այդ բանը ձեզ կը նպաստի շատ  
հուշար թուշուհը դառնալու, վորովհետև լավ ծա-  
նոթ կը լինեք, թե վոր թուշուհը վոր կողմից ե  
գալու, չէրբ և վոր ուղղութիւնը: Բացի այդ՝ ո՞վ  
գիտի, գուցե մի հնար մտածեք այդ խեղճ  
թուշուհների յերկար ու գովարին ճանապարհոր-  
դութունը մի բանով հեշտացնել և դրանով նը-  
րանցից հազարավորների կյանքն ազատել կործա-  
տից:

### 1. ՓԵՏՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հատապառուհներ, սունկեր հավաքելու և  
ուրիշ գանաղան ամանալին գրոսանքների  
ժամանակ չենք նկատում, թե ինչպես ա-  
տիճանաբար լուռ ե յերգեցիկ թուշուհների  
ուրախ յերգը: Անտառներն ու ձմակները,  
գաշաերն ու տափաստանները դեռ բոլոր-  
ովին չեն գատարկվել, այտեղ դեռ շատ թուշուհ-  
ներ կան, բայց նրանք միայն ծվծվալով դես ու  
դեն են թուշկոտում և կարծես, մոռացել են  
յերգելը: Շատերը նույն իսկ թագնվել են: Մըշ-

առապես կշկշացող կկուն ու կաշաղակը չը գիտես  
վորտեղ են թագնվել, սոխակի հետքն անգամ  
չկա, ել վոր մեկի անունը տամ: Այն ինչ՝ նրանք  
բոլորն ել մեզ մոտ են դեռ: Նրանք արդեն իրենց  
գործերը կատարել, վերջացրել են. ճուտեր են  
հանել, դաստիարակել, ո՞վ ինչպես կարողացել ե,  
մնացել ե միայն չվելը: Նրանց փետուրները  
սաշվել են, պետք ե հին գգեստը վայր ձգել և  
նոր, թարմ և տաք գգեստ հագնել: Ամառվա  
կեսին արդեն այդ փետրափոխութունը սկսվում  
ե: Հին փետուրները մեկը մյուսի յետեից ըս-  
կսում են թափվել. փետրաթափի ժամանակ  
թուշուհն իրեն վատ ե գգում, հիվանդանում ե,  
ջղպանանում, վախկոտ ե դառնում և ամեն կերպ  
աշխատում ե ուրիշների աչքից թագնվել խոտերի  
և տերևների տակ: Նա գգում ե, վոր ինքը թուշ  
ե և աշխատում ե չը մատնել իրեն վո՞չ միայն  
յերգով այլ և ծվծվալով: Փետրափոխութունը  
շատ հետաքրքիր յերևուլթ ե: Յերկու յերեք  
շաբաթ թուշուհների հին փետուրները թափվում  
են, իսկ նրանց տեղը գալիս են ավելի նոր, թարմ  
և թալամաղ փետուրներ: Շատ թուշուհների այդ  
նոր գգեստը բոլորովին նման չե գարնանալին  
գգեստիս, այլ բոլորովին ուրիշ գույն ունի: Յեր-  
բեմն վերջին գգեստն ավելի համեստ ե լինում,




մուսլ, գորշ կամ մոխրագույն, այն ինչ գարնանօ  
զգեստն ավելի փարթամ և վառ գույներ ուներ:  
Մի քանի թուշունների սև զգեստը փոխվում է  
սպիտակի: Կարծես թե թուշուններին ձմեռը  
համեստ զգեստն ավելի չե հարմար: Յեվ իսկա-  
պես այդպես է: Գարնանն ու ամառը ծառերի  
և խոտերի կանաչ տերևների մեջ ավելի հեշտ է  
պաշտպանություն գտնել, փորքան ել ուզում է  
վառ գույներով զարդարված լինեն: Մարգագե-  
տիները և դաշտերի անհամար ծաղիկներն ավելի  
պայծառ ու բազմերանգ են քան նրանց փետուր-  
ները: Հենց վոր թուշունը ծղկվեց ու մտավ թփի  
կամ տերևի տակ, արդեն նա ապահով է, վոր  
գիշատիչի ճանկից ազատվեց: Աշնանն ուրիշ բան  
է: Խոտերը խամրում են ու գետնին կպչում, ծա-  
ռերի տերևները դեղնում են ու թափվում, ան-  
տառ ու դաշտ մերկանում են: Խալտաբղետ ու  
պճնված թուշունը վոշ մի կերպ չի կարող թազ-  
նըվել թշնամու սրատես աչքերից: Հասկանալի  
չէ, վոր վորքան համեստ լինի աշնան զգեստը,  
այնքան նա նման կլինի դեղնագույն տերևներին,  
գորշագույն խոտերին և հողի գույնին, այնքան  
և ձեռնտու թուշունի համար: Ահա փետրափո-  
խության նշանակությունն ու պատճառը:

## 2. ԻՆԲՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ


Աշնան զգեստափոխությունից հետո թու-  
շուններն ավելի զվարթ ու կալտառ են դառ-  
նում: Փետրափոխությունը նրանց սաստիկ  
նվազեցնում է, իսկ փետրափոխությունից  
հետո նրանց ախորժակն այնպես է բաց-  
վում, ինչպես հիվանդությունից նոր առող-  
ջացածինը: Ահա, այդ պատճառով նրանք անգա-  
բար և առանց հոգնելու կերակրի յեաւից են  
ընկնում: Բայց, ինչպես ասացինք, աշնանը տե-  
րևների և խոտերի տակ պաշտպանվելու հնարա-  
վորությունը քանի գնում զժվարանում է, ուստի  
թուշունը պետք է նաև հոգա ինքնապաշտպանու-  
թյան մասին: Նրա թշնամիները քնած չեն, նրանց  
եւ «աշնանային ախորժակը» բացվել է: Այդ  
պատճառով այն թուշունները, վորոնք գարնանը  
մենակյաց կյանք ելին վարում և միմյանց հետ  
կովշտում, այժմ բարեկամացել են: Թե՛ ծեր և թե՛  
ջահել այժմ հավասարապես պահանջ են զգում  
հասարակության մեջ, խմբերով ապրելու: Ահա,  
հավաքվում են և չերամներ կազմում: Մոտենում  
են նախ չերկուսը, նրանց մոտիկ է գալիս չեր-  
բորդը, չորբորդը... հանդիպում են հինգերորդին,  
այնպես վոր հինգը դառնում է տաս, տասը—  
հարյուր, հարյուրը—հազար: Զարմանում են, թե



վորտեղից հավաքվեցին այդ բյուրավոր լերամ-  
ները: Վախեցնում ես լերամին, տեսար՝ թուավ  
մեկը, մյուսը, լերրորդը, լերբեմն բոլորը մեկ



1.



5



6

Նկ. 1 Յերամների ձևերը

անգամից: Առաջամ շարքերով թռչում են. վոր-

տեղ մեկը—այնտեղ և՛ ամենը: Առանձնապես  
գարծանք են պատճառում այդ լերամներից մի  
քանիսի թռչելու ձևերը: Ո՞վ չի տեսել կռունկ-  
ների յեռանկունաձև լերամները, կամ վաչրի  
սագերի անկյունավոր շարքերը—կապույտ լերկ-  
նակամարով թռչելիս:

### 3. ՅԵՐԱՄՆԵՐ

Մի քանի տեղեկութուններ ել վորսորդ-  
ների պատմածներից հաղորդեմ ձեզ: Յերթ  
հրացան ես պարպում չվող կռունկների լերամի  
վրա, կապարի կոտորակներն, իհարկե, մինչև  
նրանց չեն հասնում, բայց նրա շարքերն իսկույն  
քանդվում են: Նրանք վախեցած ցրվում են դա-  
նազան կողմ, հետո հավաքվում են իրար գլխի  
մի կույտ կազմում և վորորապատույտ բարձրանում  
դեպի վերև: Նրանց բարձրաձայն կոկոտցը ցույց  
ե տալիս, վոր սաստիկ անհանգստացած են: Յեվ  
ահա, նրանք բարձրացել են բարձր, շատ բարձր:  
Յերթ առաջնորդները համոզվում են, վոր վտանգն  
անցած է, նորից չսվում է ողի մեջ նրանց բարձր  
կոկոտցը, վոր նշան է, թե իրենց ընկերներին  
կարգի վեն հրավիրում: Յերամը գարձալ յեռան-  
կունի ձև է ընդունում, կռունկները շարվում  
են իրար յետևից, ամեն մեկն իր առաջվա տեղե-




ե բռնուժ, իսկ չեռանկյունու առաջ գարձյալ նույն հին փորձված առաջնորդը: Յեվ կոռնկներէ գումարտակը ճանապարհ ե ընկնուժ անձախ, առանց ավերորդ ազմուէի: Հեռզհետե նրանց հետքն անհետանուժ ե և աճա հյուսիսալին կողմից նըրանց փախարինուժ ե մեկ ուրիշ խուժք, վոր դարձյալ նույն ուղղությամբ ե թռչուժ: Ե՛ն, թող նրանք իրենց ճանապարհը գնան, իսկ մենք տեսնենք, թե ինչո՛ւ չվելուց առաջ թռչուններն այսպես համախմբվուժ են իրար գլխի:

#### 4. ԱՇԽԱՏԱՆԲԻ ԲԱԺԱՆՈՒՄ ՅԵՎ ՓՈՒՍԱ- ԴԱՐՁ ՈՒԿՆՈՒԹՅՈՒՆ

Յերբ թռչունն զբազված ե կերակուր վորոնելու աշխատանքով, չի նկատուժ իր շուրջն ինչ ե կատարվուժ և թշնամին ամեն հեշտությամբ դարան մտած, հետապնդուժ ե և անմիջապես բռնուժ: Իսկ չեթե չերկու, չերեք, լամ մի քանի թռչուններ համախմբված են, չերը նրանցից մի քանիսը կերակուր են վորոնուժ, մյուսներն այդ ժամանակ հոկուժ են: Հասկանալի չե, վոր աշխատանքի այսպիսի բաժանուժը նրանց հնարավորություն ե տալիս վտանգից ավելի հեշտությամբ պաշտպանվելու: Սա փոխադարձ ուղ-նության մի պարզ օրինակ ե, վոր մենք հանդի-

պուժ ենք թռչունների և ուրիշ շատ կենդանի-ների մոտ: Աճա, թե ինչո՛ւ յեն նրանք իրար մոտ համախմբվուժ: Բայց, սրանից բացի՝ մեկ ուրիշ ոգուժ ել կա:

Աշնան օրերին քանի գնուժ կերակրի խիստ պակասություն ե զգացվուժ: Թռչունների սոված լմբերն առավուտից մինչև ուշ գիշեր թափառուժ են կերակուր ձարելու համար: Վերջիվերջո նըրանք սովաման կարող են լինել, բայց այդ սարսափելի վտանգից խուսափելու համար, նրանք թողնուժ են իրենց հայրենիքը և գնուժ ուրիշ յերկիրներ: Յուրաքանչյուր խմբի մեկ կան մի քանի ծերունի, փորձված թռչուններ, վորոնք արդեն մի քանի անգամ չվել են ձմերիլու զանազան վայ-



Նկ. 2 կոռնկների յերամներ

րեր: Աճա, հենց զրանք ել դառնուժ են առաջնորդ-



ներ: Տեսել եք, ինչպես թուխան առաջնորդում է իր ճուտերին, ինչպես կրթկրթալով հավաքում է նրանց, չերբ կերակուր է ճարում, կամ ինչպես ծվարում է և զգուշացնում մի փոքե վտանգ նախատեսելիս: Ծիշտ նման պարտականութուն իրենց վրա չեն վերցնում նաև չվող չերամների առաջնորդները: Նրանք չերամներին առաջնորդում են ծանոթ ճանապարհներով, իջևանում են մի տեղ կերակրվելու, մի այլ տեղ ջուր խմելու և մի չերրորդ տեղ գիշերելու համար: Յեթե ճանապարհին հոգնում է մեկ առաջնորդը, նրան փոխարինում է մյուսը, չերկրորդը — չերրորդը և այլն:

Այնպիսի տեղեր կան, ուր թուշունները սիրով մնում են մի քանի ուր, մինչև վոր վատ յեղանակներից ստիպված այդտեղից ել հեռանան: Իսկ չերբեմն ել, ընդհակառակը, այնպիսի տեղեր են պատահում, վոր նրանք վոչ մի գնով չեն համաձայնի այնտեղ իջեվանել: Այդ բանը վկայում են բոլոր լավ վոր սորգները և թուշնորաները: Իսկ այդ բանը շատ հեշտ է բացատրելը: Առաջնորդները զուր տեղը չեն, վոր չերամը կանգնեցնում են այլ կամ այն տեղում: Նրանք դեռ չերիտասարդ հասակից, չըվելու ժամանակ ծանոթացել են, թե վոր տեղն

է ափելի ձեռնուռ և վոր տեղն է կերակրով հարուստ:

Յերբ ապեն ծանոթացանք թուշունների չվելու պատճառների հետ, չերբ լուացանք, թե ինչ նշանակութուն ունեն նրանց համախմբումները, այժմ փորձենք ծանոթանալ, թե ինչպես է կատարվում շուն:


Ի հարկե, այսպիսի փորքիկ գրքուչկում դժվար է ձեզ ամեն բան պատմելը: Յես միայն այնքան կպատմեմ, վոր ձեզ ոգնի ինքնուրույն կերպով դիտողութուններ կատարելու: Թուշում են չերամները ցամաքների և ծովերի վրայով: Թուշունների յուրաքանչյուր ցեղ իր հատուկ ճանապարհն ունի, վոչ թե մեկ, այլ տասնյակ ճանապարհներ: Այդ ճանապարհներն ուսումնասիրելն այնքան ել հեշտ չեն, բաց այն աշխատանքը, վոր յես պիտի առաջարկեմ ձեզ, կարծում եմ, անողուտ չի անցնի:

## 5. ՉՎԵԼՈՒ ԿԱՐԳ

Չվելու ընդհանուր կարգն այսպես է: Ամենից առաջ չվում են միջատակերները, վորոնք վորոշակի կերակուրներով են սընվում, որինակ, մեղվա կերը, վորսում է մեզու և մեղվանման միջատներ: Վաղ են ճանապարհվում նույնպես կկուեն և այն թուշունները, վորոնք կերակրվում են միջատների թրթուրներով: Նրանց




յետեից ճանապարհովում են սոխակը, կապտափողը, կարմրատուտը և ուրիշ միջատակեր թռչունները: Սրանք բոլորը փոքրիկ չերամներով թռչում են արշալույսին կամ վերջապահին, անցնելով անտառից անտառ, վորտեղ ցերեկը թագնվում են հանգստանալու և կերակրվելու համար: Այդ ժամանակ գետերի, լճերի և ճահիճների ափերին լսվում են վայրի բազերի, ճուտերի և կացարների աղաղակները, վորոնք



Նկ. 3 կացար

աղմուկով թռչում են մեկ ջրափոսից մյուս ջրափոսը: Ավելի ուշ շփում են սարյակները, տորգիկները, կոուենկները, վայրի սագերն ու բազերը և հատիկակեր թռչունների մի ամբողջ բազմութուն: Մի բանիսր թռչում են ցերեկն աղմկելով և կռկռալով, մյուսները թագնվում են և միայն չերեկոյան կամ գիշերն են ճանապարհվում:

Մի բանիսի ճանապարհը գետերն են, ուրիշներինը՝ ջրաբաժանները, լայն դաշտերն ու տափաստանները, չերրորդ խմբինը՝ անտառները և այլն: Աշնան չուխ ժամանակ գետերի, լճերի և



Նկ. 4 Արագիլ

լճակների ափերը, աչգիներն ու անտառները, ձորերը մի առանձին կենդանու թիւն են ստանում:



## 6. ՉՎԱՎԱՅՐԵՐԸ

Ո՞ւր են գնում այդ բոլոր թոշուները:

Գնում են այն չերկիրները, վորտեղ ձմեռն ել կարող են կերակուր ճարել: Իհարկե, միջատակեր թոշուները չվում են շատ հեռու հարավ, ավելի տաք չերկիրներ: Այն ժամանակ չերբ մեզ մոտ ամեն ինչ մեռած է, և ձյան կույտերի մեջ թաղված, այնտեղ, հեռու հարավում ամառ է, արևն այրում է: Մեր թոշուներն այնտեղ ամենայն հեշտությամբ ճարում են ամեն տեսակ միջատներ և կերակրի նեղությունը չեն քաշում:

Հացահատիկներով կերակրվողները շատ հեռու չեն գնում, վորովհետև այդ կերակուրն ամեն տեղ կը ճարվի, վորտեղ գետինը չի սառչում կամ ձյունով ծածկվում:

Զրի մեջ կերակուր ճարողները ձմեռում են այնպիսի տեղերում, վորտեղ ձմեռն այնքան խիստ չէ, վոր գետերի ու լճերի չերեսը ծածկվի սառույցով:

Ահա, այս ամենն իմանալուց հետո ձեզ մնում է, վոր ինքներդ հետաքրքրվեք և ուսումնասիրեք այս դարձանալի չերևույթը: Զեր դիտողությունները բոլորը գրի առեք և այն ժամանակ կը տեսնեք, վոր շատ բաներ կան, վոր յես չը կարողացա ձեզ պատմել և շատ նորանոր բաներ ձեզ համար հասկանալի և պարզ կը լինեն:



« Ազգային գրադարան



NL0269809



ՀՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԶՈՒՅՆ ԳՐԱ

Գինը

1. Տերևաթափ և աշնան զույներ . . .	10	կ.
4. Պատուհներ և սերմեր . . . . .	10	»
8. Ինչ վոր կը ցանես, աչն ել կը հնձես	10	»
11. Բամբակ . . . . .	10	»
12. Տորֆ, քարածուխ և նավթ . . .	10	»
16. Մեղու . . . . .	15	»
20. Հան, եր. . . . .	15	»
21. Շերամ . . . . .	10	»

ՇՈՒՏՈՎ ՀՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

2. Կենդ. հարմարացումը և ձմեռալին քունը. . . . .	
5. Հող և նրա մշակումը. . . . .	
6. Բանջարանոց. . . . .	
7. Ալգէ. . . . .	
9. Մարգագետին . . . . .	
10. Ող և ջուր. . . . .	
13. Կովի կերը և խնամքը. . . . .	
14. Կաթնամթերքներ. . . . .	
15. Ընտանի թռչունների խնամքը. . .	
17. Գյուղատնտ. մեքենաներ և զործիք- ներ . . . . .	
18. Ակվարիում և տերրարիում . . . . .	
19. Ինչպես կազմել հերբարիում . . . .	
22. Անտառ . . . . .	